

891.99

72-89

(Gulmole) 1904-1905  
Gulmole  
Gulmole

(Gulmole) 1904-1905  
Gulmole  
Gulmole

8



23.04.2013

32367

19 NOV 2011

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍԻՆՏԱԿՍԱՎԵՐԻԱՆ  
ԶԵՆ

# ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Թ Ի Ն Լ Ի Ջ

Տպարան «Մամուլ» Հնկ. Լորիս-Մեյիբևան փողոց № 22  
1916

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՆԵՏ

Վաղուց թէև իմ հայեացքը Անյայտին է ու հեռուս  
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,  
Բայց կարօտով ամեն անգամ երբ դառնում եմ դէպի քեզ՝  
Մըղկրտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկէզ,  
Եւ գաղթական զաւակներիդ լուռ շարքերից ուժասպառ,  
Եւ զիւղերից, և՛ շէներից՝ տըխնւր, դատարկ ու խաւար,  
    Ձարկւած հայրենիք,  
    Ձըրկւած հայրենիք:

Խըռնըւում են մըտքիս հանդէպ բանակները անհամար,  
Տըրորում են քո երեսը, քո գաշտերը ծաղկավառ,  
Ու ջարդարար փոհմակները աղաղակով վայրենի,  
Աւարներով, աւերներով, խընջոյքներով արիւնի,  
Որ դարձրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,  
Խեղճ ու լալկան քո երգերով, հայեացքներով անժըպիտ,  
    Ողբի՛ հայրենիք,  
    Ողբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,  
կանգնած խոհուն, խորհրդաւոր ճամփին նորի ու հընի.

Հառաչանքով սրբաի խորքից խօսք ես խօսում Աստծու հետ  
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարազէտ.  
Խորհում ես դու էն մեծ խօսքը, որ տի ասես աշխարհքին  
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգաում է մեր հոգին—

Յոյսի հայրենիք,

Լոյսի հայրենիք:

Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հազած,  
Հազար հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,  
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,  
Կենսաժրպիտ իր շողերը պիտի ժրպտան առաջին,  
Ու պօէտներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անէծքով,  
Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով,  
Իմ նոր հայրենիք,  
Հըզօր հայրենիք...

1915

## ՄԵՐ ՈՒՒՏԸ

Մենք ուխտ ունենք՝ միշտ դէպի լոյս,  
Ու գընում ենք մեր ճամփով՝  
Մըրրիկներով պատած անյոյս,  
Սե խաւարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արեան ծովեր,  
Սուր ենք տեսել ու կըրակ,  
Մեր ճակատը դէմ ենք արել  
Մըրրիկներին հակառակ:

Ու թէպէտե պատառ պատառ  
Մեր դըրօշը սըրբագան,  
Ու մենք չունենք տեղ ու դադար՝  
Երկրից երկիր ցիրուցան,

Բայց գընում ենք մենք անվեհեր  
Չարկերի տակ չար բախտի,  
Մեր աչքերը միշտ դէպի վեր՝  
Դէպի լոյսը մեր ուխտի:

1903

## Հ Ի Ն Կ Ռ Ի Ի Ը

### Տ Ա Ն Ը

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Մենք կարծում էինք թէ իր շանթերով  
Հրսկում է Մսուած Սասմայ սարերին.  
Մենք ասում էինք՝ անթիւ նաւերով  
Կըզան օգնութեան մեր ծանրը օրին...  
Աւաղ մեր պայծառ յոյսերի համար.  
Ահա խորտակւած, և ահա կըրկին  
Նայում ենք անյոյս, մենակ, դալկահար՝  
Մորթող թըշնամու արիւնոտ ձեռքին,  
Երկրի մեծերը չեն փոխում իրենց  
Մեռելի ոսկրին ողջ ազգը հայի,  
Մեր տունն են ուզում, մեր տեղն են ուզում,  
Մեր բուն երկիրը՝ մեզնից ամայի...  
Նա էլ, որ Աստծու անունով եկաւ,  
Փրկչական խաչով, խօսքով գրթութեան,

Նա էլ Աստրծուն՝ կանգնեց՝ փառք տըլաւ,  
Որ մենք յօշոտւած, տանջւած ենք էսքան...  
Ու հոսում, հոսում, հոսում է անմեղ  
Արիւնն-արցունքը տարաբախտ ազգի,  
Հոսում ամեն օր, հոսում ամեն տեղ,  
Եւ դեռ սոսկային չի եկել իսկի...  
Եւ ահա մենակ, խոցւած ու ցաւոտ,  
Թէ մարմնով տանջւած՝ հոգով առաւել,  
Մենք միտք ենք անում մինչև առաւօտ,  
— Տէր ամենագէտ, մենք ի՞նչ ենք արել...»

### I

Հայի չար բախտը ինձ ներքև բերաւ  
Բարձրը Գուգարքի ծաղկոտ սարերից,  
Իմ հոգին լըցրեց հառաչանք ու ցաւ,  
Տըխուր երգերի քընար տըլաւ ինձ:  
Դէ, հեծծիր, իմ երգ, ինչպէս կը հեծծի  
Բուքն իմ ամայի աշխարհքի վըրայ,  
Անքուն կարօտի դուռը կը ծեծի,  
Թէ՛ քու անբախտը չըկայ ու չըկայ...  
Դէ, հեծծիր, իմ երգ, ինչպէս սըգաւոր  
Հայի հեծեծանքն ու բողոքն անվերջ,  
Ինչպէս պանդուխտի թառանչ սըտախոր  
Օտար դըռներում, անյայտ ճամփի մէջ...

## II

Իմ միտքն էլ, աւանդ, շրջում է մոլոր  
 Հայի հալածւած պանդուխտի նրման,  
 Մենակ ամեն տեղ, արխուր ամեն օր,  
 Ցաւերով լրցւած պանդուխտի նրման:  
 Կորցրել է վաղուց ամենն, ինչ ունէր,  
 Փրնարածն էլ, էսպէս, չի գըտնում բընաւ,  
 Անքուն ջրի պէս գընում է երեւ,  
 Աշխարհքից աշխարհք, մի ցաւից մի ցաւ:  
 Ու, ինչպէս օտար աշխարհքից դարձող  
 Կարօտած ճամբորդ, նըկատում է նա՝  
 Հեռնւ, մըթան մէջ, վառ կարմիր լուսով  
 Ծաղկում է ծանօթ լուսամուտն անա...  
 Մենակ ու խաղաղ ճըրագի առջև,  
 Չոր ձեռքը արւած դայուկ ճակատին,  
 Մըտքի ծովն ընկած մըտածում է նա,  
 Հին տառապանքի, հին ցաւի որդին:  
 Գըլխի վերը արխուր պատկերներ,  
 Գըրքեր ու գըրքեր իր շուրջը բոլոր...  
 Ու ներս է մտնում մի բարի ըստեր,  
 Իր մայրը ցամքած, մայրը սեւաշոր:  
 — Ի՞նչ ես միտք անում, Վահան ջան, էդքան,  
 Ասն, քեզ զուրբան, քո մըտքին զուրբան,

Ի՞նչ ես միտք անում ու հաւնւմ, հաւնւմ...»  
 — Բան չըկայ, մայրիկ, գըլուխս է ցաւում...»  
 — Չէ, սուա ես ասում, ինձ չես խաբիլ էլ.  
 Էդ սով է, ասն, քո քունը կըտրել,  
 Էդ սր սիրունը, սր անուշ հոգին...»  
 — Հն, գըտնոր, մայրիկ... սիրում եմ մէկին...»  
 — Տեսնոր, որ ասի՝ չես խաբիլ ինձ էլ,  
 Տեսնոր, ինչպէս եմ ցաւը իմացել...  
 Ինչո՞ւ ես հասլա ծածկում ինձանից,  
 Ծածկում ինձանից—քեզ սիրող նանից...  
 Դէ սով է, ասն, ես էլ կը սիրեմ...  
 Դէ սը է, ասն... սը է, որ բերեմ.  
 Բերեմ, որ էդքան միտք չանես էլ դու...»  
 — Չես կարող, մայրիկ, նա շատ է հեռու...  
 Նա շատ է հեռու, գերութեան միջում,  
 Դու չես իմանում, դու չես ճանաչում...  
 Էնպէս մի դըժար տեղ եմ սիրել ես...  
 Չես կարող հասնես, չես կարող բերես...»  
 Ու դուրս է գընում յուսահատ, մոլոր.  
 Իր մայրը ցամքած, մայրը սեւաշոր,  
 Աղօթում իրեն Վահանի համար,  
 Աշխարհքի համար, ամենքի համար...



## III

Յայանրւեց սարա մի օտար արղայ,  
 Մի ուրիշ արղայ երևաց էլի,  
 Խօսում են անքուն գիշերներն երկար,  
 Խօսում են տաք-տաք, մնլթ, կասկածելի...  
 — Ո՞վ են, Վստան ջան, գալիս են քեզ մօտ,  
 Էդ ինչ տղերք են՝ գունատ, անծանօթ...  
 Երնէկ իմանամ՝ էդ ինչ էք ուզում,  
 Էդ ինչ էք էղքան խօսում ու խօսում...»  
 — Պանդուխտ են, մայրիկ, ընկեր արղերք են,  
 Գըլած, հալածւած, ընկած գէս ու դէն.  
 Տուն ու տեղ չունեն, ինձ մօտ են գալիս,  
 Զըրոյց ենք անում, իրար սիրտ տալիս...»  
 — Իմ անբախտ գաւակ, մանկուց վըշտակօրս.  
 Ընկերներդ էղպէս հալածւած, անհող,  
 Միրածըդ հեռու, գերութեան միջում...»  
 Խօսում է մայրը, խօսում, հառաչում,  
 Ու դուրս է գընում կըրկին շըւարած...  
 Ամեն տեղ քընած, ամենքը լըռած...  
 Մենակ՝ մընում է իր անհող մարդուն,  
 Չի գալիս նա էլ, դեռ չի գալիս տուն.  
 Իր պէսների հեռ էլի էն անտէր  
 Գինետանն ընկած ու խօսում է դեռ...

## IV

(Գինետանը)

Կըտրել է վաղուց ամեն ձէն ու ձուն.  
 Գիշերւան կէս է: Յոգնած ու անքուն,  
 Գըլուխը դինոտ դազգահին դըրած՝  
 Գինետան տէրն էլ քուն մըտաւ թըմրած:  
 Կեղտոտ լամպարի աղօտ լուսի տակ,  
 Մէջ տեղը մի գաւ, աղքատ ու անկարգ  
 Սեղանի շուրջը, իրենց անկիւնում,  
 Գեռ երեք հոգի գըրօյց են անում:  
 — Յաւ-կըրակ դառաւ էս լակոտն, ախպէր,  
 Էլ բան չի սաւում, հետը չի խօսում,  
 Ուշքըն ու միտքը միշտ հեռու տեղեր՝  
 Չես էլ հասկանում, թէ ինչ է ուզում...  
 Հաւան չի կենում աշխարհքի կարգին.  
 Ասում է՝ մարդիկ բըռնութեան տակին...  
 Միտս էլ չի գալիս՝ ինչպէս է ասում.  
 Խըրթին, գըրաբառ բաներ է խօսում.—  
 Էս մէկն՝ էսպէս է, էն մէկին՝ էսպէս...  
 Երկուսից մինը — կամ նըրանք, կամ ես...»  
 Մնւս կաց, ասում եմ, էդ ինչ ես անում...  
 Թէ՛ դու հին մարդ ես, դու չես հասկանում...»  
 — Հն, հն, հն, հն, հն.

Այ քեզ նոր տըղայ...  
 Դէ բաժակըդ բեր,  
 Մարտիրոս ախպէր,  
 Բեր մի մի բերան  
 Կեանք խընդրենք զըրան:  
 Էդ, ինչ որ դու ես խաբարը տալիս,  
 Մի ուրիշ տեսակ բան է դուրս գալիս...  
 Բարի յիշատակ լինի քեզ համար,  
 Տունըդ շէն պահի ու ծուխըդ վարար»:  
 Ածում են կոնծում ընկեր ծերերը,  
 Բայց նոր է բացւել պատմութեան ծէրը:

— Հն, ախպէր ուրիշ բան է դուրս գալիս.  
 Ես էլ հէնց էդ եմ զըլխիս վայ տալիս,  
 Թէ սրբա վերջը ուր պիտի գընայ.  
 Տանից ու բանից եղած աւարա,  
 Աշխարհքի դարդը շալակն է առել՝  
 Ամենքի համար դարդաքաշ դառել...  
 Ընկեր թէ օտար, ծանօթ, անծանօթ—  
 Ով վեր է կենում—վազում է իր մօտ.  
 —Վահան, ինչ անենք... Վահան, սոց կենանք...  
 Վահան, ինչ կասես... Վահան, երբ գընանք...  
 Գըլխի՛ էք ընկնում՝ «էնտեղ» են գընում...  
 «էնտեղ» հօ պիտէք, լաւ էք իմանում...  
 —«էնտեղ», օֆ, «էնտեղ»—

Կըրակ է անթեղ...  
 Դէ բաժակըդ բեր,  
 Մարտիրոս ախպէր.  
 Արի, մի սըրտանց  
 Կեանք խընդրենք զըրանց...  
 Ջահել ժամանակ ինչքան եմ ես էլ  
 Էդ ճամփի վըրայ անքուն երագել,  
 Ինչքան եմ ուզել թէ փախչեմ ծածուկ...  
 Հիմի գըրանցն էք թարիֆ անում դուք...  
 Ուր գընան՝ Աստուած բանները աջի,  
 Չարը խափանի, բարին առաջի...»  
 Ածում են կոնծում ընկեր ծերերը,  
 Բայց հեռու է դեռ պատմութեան ծէրը:

—Շընորհակալ եմ, ողջ կենաք, ախպէր:  
 Էս տեսակ մի բան չեմ տեսել ես դեռ.  
 Տեղ ունես թէ չէ՝ մըտիկ չեն տալիս,  
 Տասը գընում են՝ քըսանը գալիս,  
 Ինչ որ ճանկում են՝ ուտում են, թափում,  
 Ամբողջ գիշերը վիճում, աղմըկում,  
 Ամպի պէս ծըխով սենեակը լըցնում...  
 Էլ ոչ մահճակալ, ոչ տեղ են հարցնում.—  
 Մինը բարձրանում՝ սեղանին պառկում,  
 Միւսը յատակին լէն-արձակ ձրգում...  
 —

Ոչ աղբ են նայում, ոչ փոշի, ոչ ցեխ,  
Պառկում են էստեղ, պառկում են էստեղ...»  
— Հն, հն, հն, հն, հն.

Թամաշա է հն...

Իէ բաժակը բեր,

Մարտիրոս ախպէր.

Արի, մի սըրտանց

Կեանք խընդրենք զբանց.

Շատ լաւ տըղերք են, ես ու իմ հողին.

Հաւան եմ կենում զբանց արարքին. —

Մարդը նա հօ չի՛ հենց իրեն նայի,

Մարդը նա է, որ աշխարհքը շահի...»

Տէր Աստուած պահի իրեն խընամում...»

Ածում են՝ վերջին բաժակն էլ քամում,

Ձեն հասնում սակայն պատմութեան ծէրը,

Ու միշտ ընկնում է էզուց գիշերը:

## V

Դատարկ փողոցով, բարձրը հազարով,

Ինքը իրեն հեա մտնակ խօսելով,

Թըրբիկ հա չըրբիկ, գիշերայ մըթնում

Մարտիրոս ախպէրն իր տունն է զընում:

Եւ ուշ գիշերով հասնում է նա տուն:

Ճըրագը վառ է, «նրանք» էլ զարթուն,

Սղմըկում են զեռ կողքի սենեակում,

էն նոր դուրս եկած երգերն են երգում:

Պառան էլ անքուն իրեն է մընում,

Ձեռները ծոցին դուրս ու տուն անում,

Ու մարդը շէմքից մըտած— չըմտած՝

Դիմացն է գալիս հանգած ու հատած:

— Բն, գիտես, այ մարդ, ինչ իմացայ ես,

Գիտես ինչիցն է մաշում երեխէս, —

Սիրում է մէկին...»

— Վայ քու կարճ խելքին...

Ինչ սիրահարւած, բան գիտես իսկի. —

Ազգի համար է միաք անում, ազգի.

Ուրիշի համար, խեղճերի համար...

Ինչ սիրահարւած, կարճամիտ յիմար,

Ինչ ես հասկանում՝ ինչ կայ աշխարհքում.

Ականջը մի բաց, տես ինչ են երգում...»

(Տղերքը երգում են)

Սև սարերի ետև նըրանք

Տառապում են խաւարում,

Էլ չեն ուզում ու ազատ կեանք

Անո՞ծ ու քիտո՞ւ աշխարհում:

ՀԱՅԿԱՆՅՈՒՆԻ ԹՎԱԿՈՎ



100.6  
28624

Սարերն ամպոս,  
Կերթանք խըմբով  
Մենք նըրանց մօտ:

է՛յ, հերիք էր, չար բռնակալ,  
Քանի տանջես խեղճերին.  
Խեղճը պիտի ապրի դարձեալ,  
Վասն եկել է քու օրին...

Ազատութեան որդիքն ենք մենք՝  
Թրուած դէպի ապագան:  
Էսպէս խըմբով սըլանում ենք,  
Ո՛վ կը փակի մեր ճամփան.  
Կայծակ կըլնենք  
Կիջնենք ամպից.  
Հեռու ճամփից,  
Հեռու ճամփից...

Հէ՛յ, գալիս ենք, ո՛վ տանջւածներ,  
Փալիս ենք մենք զինավառ,  
Եւ ազատ օր, և՛ կեանք, և՛ սէր—  
Ողջ բերում ենք ձեզ համար:

• • • • •

## VI

Գողգոթ ու գունատ պառուները լուռ  
Ականջ են դընում: Սարսափ ու սարսուռ  
Պատել է նրանց և սարսափահար,  
Տեղները սառած, նայում են իրար.  
Ի՛նչ է կատարւում իրենց հին տանը,  
Ի՛նչ երգ է երգում իրենց Վահանը,  
Ի՛նչ երգ են երգում էս տղերքը նոր,  
Ի՛նչ երգ են երգում անգո՛ւսպ, ահաւոր...  
Ամբողջ գիշերը կըրակի վըրի  
Էն շամփրի նըման, անքուն ու ցաւոտ,  
Պըտուտ են գալիս անկողնի միջին,  
Պըտուտ են գալիս մինչև առաւօտ:

—Վահան ջան, Վահան, ի՛նչ երգեր են էդ.  
Ի՛նչ վրտանգաւոր երգեր էք երգում...  
Էդ ո՛ւր ես ուզում գընաս դըրանց հետ...  
Ի՛նչ է պատահել, ի՛նչ կայ էն երկրում...»  
—Է՛հ, մայրիկ, դու էլ՝ ի՛նչ երգեր են էդ...  
Ջահել տղերանց երգեր են էլի...  
Ջահել տղերք ենք, միաքներըս թըռչում՝  
Հազար մի հեռու տեղ են ման գալի...»  
Ու ժողովները դարձան աղմըկոտ,

Աշնան հաւքերի էն տարմի նրման,  
 Որ դրժվրժում է՝ չըւելուց առաջ  
 Դէպի արեոտ կողմերը գարնան:  
 Մի օր էլ յանկարծ աղմուկը լըռեց,  
 Վահանը չեկաւ էն գիշերը տուն:  
 Չըկայ միւս օրն էլ, չըկայ ոչ մի տեղ,  
 Ամեն հարց ու փորձ անցաւ ապարդիւն:  
 Եւ անա նամակ կորած Վահանից:  
 Բանում են ըշտապ, դողդոջ ձեռքերով.  
 Ասում է՝ ի դուր էլ մի փնտրէք ինձ,  
 էլ մի փնտրէք ինձ ու մընաք բարով...  
 — Դուք ինձ կեանք արւիք, դուք ինձ մեծացրէք—  
 Բայց քանի էսքան ցաւ կայ աշխարհքում,  
 Իմ կեանքն իմը չի, իմ սիրտն իմը չի,  
 Չեմ կարող հանգիստ մընալ ձեր գըրկում:  
 Յաւի աշխարհքում արնոտ ու անեղ  
 Ուրիշ նոր կեանք է բացւել ինձ համար.  
 Ուրիշ հայրեր են մընում ինձ էստեղ,  
 Ուրիշ մայրեր են կանչում անդադար...  
 Ներեցէք, որ ձեզ թողնում եմ էգպէս  
 Անկանք, անխընդում, ծերութեան օրով,  
 Ներեցէք ձեր խենթ, խելագար որդուն,  
 Մոռացէք նըրան ու մընաք բարով...»

Որդու նամակը ծընկանը դըրած,  
 Արցունքը ցամքած էն մաշած դէմքին,  
 Խաղաղ իրիկան դէմ ու դէմն անա  
 Նըստած է մայրը իր դատարկ շէմքին:  
 Կատուն է կողքին մըռռում միալար,  
 Փոքրիկ Սէրիկն էլ, կուշ եկած իր մօտ,  
 Էնպէս միամիտ, ախմբ, դալկահար  
 Պըրշկել է մօր դէմքին արցունքոտ:  
 Նայում է մայրը, նայում է հեռուն,  
 Էն անյայտ հեռուն, անաւոր, անվերջ,  
 Ուր գընաց իրեն զաւակը սիրուն,  
 Գընաց «նրանց» մօտ, արեան ծովի մէջ...  
 — Ո՛վ քաղցրահայեաց սուրբ Աստածածին,  
 Ո՛վ արագահաս զինուոր սուրբ Սարգիս,  
 Դուք օգնէք խեղճին, հասնէք նեղածին,  
 Դուք տաք հովութիւն արար աշխարհքիս.  
 Հարեհաս լինէք «նրանց», ամենքին,  
 Ամենքի հետ էլ իմ ձար ու մէկին...»  
 Աղօթք է անում իր մէկի համար,  
 Աշխարհքի համար, ամենքի համար,  
 Մինչև թըռչում է ձաճանչը ետին,  
 Մինչև որ մութը առնում է գետին...



Ո՛չ, հէքեաթ չի սա լիբը հըրաշքով,  
 Եղած թէ չեղած մըթին աշխարհքում,  
 Ճըշգրիտ դէպքէ սա տեսած իմ աշքով,  
 Եւ հէքեաթ չկայ մեր անբախտ կեանքում...

Մեր երջանկութեան աղբիւրը փակած՝  
 Մեր վարդ քոյրերին յօշոտում է նա...  
 Ա՛խ, ինչքան արիւն, արցունք է թափւած  
 Մեր սիրուն երկրի սարերի վըրայ...

## I

«Լօ-լօ, լօ-լօ, մերն են սարեր,  
 Ծաղկոտ սարեր Տարօնի,  
 Ծաղկոտ սարեր, ազատ օրեր,  
 Սէրն ու զըզւանք սիրունի...  
 Լօ-լօ, լօ-լօ»...

Գըլնւխ արւէք, գոռոզ սարեր,  
 Անց է կենում Մուսաբէկ,  
 Գըլնւխ արւէք, վախկոտ հայեր,  
 Չընչին զիւղեր ու օբէք:

Ո՛ւր կայ ոսկի, ո՛ւր սիրուն կին,  
 Առաջ բերէք զըլխաբաց.  
 Ո՛վ կայ ընդէմ նըրա կամքին,  
 Ո՛վ է կեանքից կըշտացած...  
 Մըշու երկրում թուր է զարկում՝  
 Դողում են վան իր թափից,  
 Դողում են վան, մինչ Արզըրում,  
 Ահեղ թափից, սարսափից...

## II

Գըլնւխ արւէք, վախկոտ հայեր.  
 Չըրը՛նդ, եկաւ Մուսաբէկ.  
 — Հէ՛յ, դուրս արի, քէշիշ բարան.  
 Ո՛վ կայ տան մէջ, դուրս եկէք...»  
 Ու սըրսի կէսմութի մէջ  
 Գուճուպ եկաւ քանանան,  
 Դողողջելով, ծերուկ ու խեղճ,  
 Բրոնած սարսափն իր մահւան:  
 — Հաւան ես ինձ, քէշիշ բարան,  
 Հապա նայիր մի վերև...»  
 — Ասուած է քեզ հաւանի, ազն,  
 Ասուած կեանք տայ ու արև:  
 — Դէ բեր, հապան, որ հաւան ես,  
 Աղջիկդ բեր, տուր ինձ կին.

Դէհ, շուտ արան, քէշիշ բաբան,  
Դուրս բեր սիրուն Շողիկին:»

Լուռ կանգնած է ծեր քահանան,  
Դէմքը գեղին, միրքի պէս,  
Ծիծաղում է լացի նրման,  
Թէ լալիս է ժրպտերէս...

— Հն, հն, հն, հն... հաւան չես ինձ...»

Խնդաց խումբը՝ հն, հն, հն...

Ու սոսկալի էն ծիծաղից

Սարսափն ընկաւ տան վրրա:

— Ո՛վ չի հաւան Մուսաբէկին...

Մի Մուսաբէկ—մի աշխարհք...

Բաղգաւոր ենք՝ ես... իմ որդին...

Ո՛վ է տեսել էսպէս փառք...

Միայն թէ, աղն, գուժ արա մեզ,

Ժամանակ տուր երկու օր,

Որ պատրաստենք բէկին վայել.

Ոտիդ հողն ենք նորից նոր...»

— Մի երկու օր... բայց իմացիր,

Ես եմ գալու ես նորից.

Երկինք թրուր, գետինն անցիր,

Չես ազատւիլ իմ ձեռից...

«Լօ-լօ, լօ-լօ, մերն է Տարօն

Վայելքներով իր բոլոր...»

Լօ-լօ, լօ-լօ...» Հանգաւ «լօ-լօ»-ն

Սարի ետև հեռաւոր:

### III

Ի՞նչ է զօղանջում զանգաղը դուժկան,  
Գիւղի զանգաղը էս անվախտ ժամին.

Կարկճաւ է գալիս մըթնած երկընքից,

Հրդեհ է ձրգել գիւղը թըշնամին...

— Ի՞նչ է պատահել, ծերունի տէրտէր,

Ինչ ես վրդովում էս յոգնած խալխին:

— Եկէք, իմ որդիք, եկէք, իմ որբեր,

Երկինքը փըլաւ իմ ձերմակ գըլխին...»

Ու լաց է լինում զանգաղը ժամի,

Գալիս է կանգնում ամբողջ Տալ-որիկ,

Ու ձայն է տալի, գոչում ծերունի

Իրենց քահանան ձայնով զարհուրիկ:

— Եկէք, ընկեր-հարևաններ,

Իմ Շողիկի հարսնիքին.

Ծաղիկ բերէք ալ ու կարմիր

Իր անթառամ պըսակին...

Դուստր եմ պահել ես նազելի,



Սրբախ խընդում, աչքիս լուս.  
 Քուրդը եկաւ դուտորըս խըլի,  
 Կեանքը խըլի ծերունուս:  
 Հայր էք դուք էլ, զաւակի աէր,  
 Մի ճար գրատէք իմ ցաւին...»  
 Ու ծերերը՝ չոր, ալեհեր,  
 Հառաչում են խըմբովին.  
 —Ափսոս Շողիկ, սիրուն Շողիկ,  
 Մեր աչքի լուս, մեր ալ ծաղիկ...  
 Վայ խեղճ ծընող, ծեր քահանայ.  
 Քրքրի ճամփէն տատասկ դառնայ...»

Հընչում է դարձեալ զանգակը ժամի,  
 Կանչում է, գոչում հայրը ծերունի.  
 —Հաւար ձրգէք հեռու աեղեր,  
 Ազգ ու աղինք իմանան,  
 Դրբօշ բանան, զօրքեր կապեն,  
 Թող զան, հասնեն օգնութեան...»  
 Եւ դուր ծերունու աչքերը անզօր  
 Հրբաշք են փընտրում մըշուշոտ հեռում,  
 Լուռ են ու դատարկ ճամփէքը բոլոր,  
 Փոշի չի ելնում հայոց դաշտերում:  
 Լալիս է սակայն զանգակը կըրկին  
 Ու գոչում է ծերն առաւել ուժգին.

—Լըսիր, Աստուծ, եթէ մի օր  
 Բոյր եմ խընկել քո անւան,  
 Թէ դու էլ ես ծեր, ալեհր,  
 Ու գութ ունիս հայրական...»  
 Բայց ծածկում է դէմքը Աստուծ՝  
 Հայից դարձած ու խըռով,  
 Սեւս կիշերն իջնում է ցած,  
 Լիքը անքուն ցաւերով...

## IV

Հայի գիշեր, հայի գիշեր,  
 Յաւի անդունդ անյատակ...  
 —Աղջիկս, ինչո՞ւ չես քընում դեռ,  
 Ի՞նչ ես լալիս տեղի տակ:  
 —Չ'իտեմ, մայրիկ, ինչու էսպէս  
 Քուն չի դալի էլ աչքիս.  
 Աչքըս քանի վաւում եմ ես՝  
 Քուրդն է կանգնած առաջիս...  
 —Քնիր, բալան, մի վախենար,  
 Աստուած կայ դեռ երկնքում.  
 Քուրդ ու տաճիկ, զարկ ու աւար  
 Շատ ենք տեսել մեր կեանքում...  
 —Մայրիկ, մայրիկ, չե՞ս իմանում,  
 Ո՞վ է լալիս դուրսն անտէր...»

Մայրիկ, մի տես՝ չի լուսանում...  
Ախ, ինչ ծանր է էս գիշեր...

—Քնիր, բալաս, Որբն\* է մենակ  
Իր Սըհակին որոնում,  
է՛, քեզ նրման, մի ժամանակ  
Նա էլ աղջիկ է լինում,  
Հաւանում է չար տաճիկը,  
Գալիս եղբօրն ըստանում,  
Ճարը հատած հէզ աղջիկը  
Աստծուն աղօթք է անում:

—Ո՛վ Տէր Աստուած, թևեր սուր ինձ,  
Թեթև թևեր թռչունի,  
Թռչեմ, կորչեմ էս աշխարհքից,  
Անգութ ձեռից դուշմանի...»  
Էն օրւանից ման է գալի  
Թևեր առած, անդադար,  
Կանչում, կանչում, ձէն է տալի  
Իր Սըհակին ջրատար...  
Քնիր, բալաս, Աստուած դեռ կայ,  
Աղօթք ասա մըտքիդ մէջ,  
Հիմի շուտով լիսն էլ կը գայ,  
էս գիշերն էլ ունի վերջ...»

\* Թռչունի անուն է:

—Թըր՛խկ... Թըր՛խկ...

—Ով է ծեծում

Կէս գիշերին դուռն էդպէս...»

—Թըր՛խկ, Թըր՛խկ...

Հէ՛յ, չէս լըսում,

Վեր կայ, տէրտէր, ներս թող մեզ...»

Ու անլեզու քըրզի նրման  
Սարսափն յանկարծ ընկաւ տուն,  
Տեղի տակին կըծիկ եկան  
Մանուկները դեռ անբուն:  
Մարեց մայրը լեղապատառ,  
Աղջիկն հանգաւ մօր՝ զըրկում,  
Իսկ դուռն ուժգին ու անդադար  
Հն գարկում են ու գարկում:

Լոյսը ձեռքին ծերը գունասա  
Դողգողում է, երերում...  
Ձեռքը փակին տարաւ յանկարծ,  
Դուռը բացւեց խաւարում,  
Շառաչեցին, շողշողացին  
Ձէնքերն լուսումն էն աղօտ,  
Ու գինավառ ներս խուժեցին  
Երեք ջահել անծանօթ:

—Օրհնեան ի Տէր, հայի լեզուով  
Ողջունեցին ու մըտան.

Մութ խըրճիթը լըցւեց լուսով  
Սնակընկալ խընդութեան:

— Էսպէս անժամ, դարիբ եղբարք,  
Ո՞ւսկից էք դուք գալիս ինձ...»

— Հեռու տեղից, Կովկասից...»

— Բայց մեր երկիր ամեն անկիւն  
Մահւան երկիրդ ու վտանդ...»

— Դըրա համար մենք եկանք...»

— Իսկ դուք չունէք ձեր աշխարհքում  
Տուն, տեղ, ծընող, քոյր կամ կին...»

— Ունենք, թողինք ամենքին...»

Հայի գիշեր, անքճն գիշեր,

Լի տանջանքով ու մութով,

Հայի գիշեր, անհսն գիշեր,

Լի ահաւոր խորհուրդով...



## ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփէն խաւար, մեր ճամփէն գիշեր,

Ու մենք անհատնում

էն անլոյս մըթնում

Երկնք դարերով գընում ենք գէպի վեր,

Հայոց լեռներում,

Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,

Մեր գանձերը ծով,

Ինչ որ դարերով

Երկնել է՝ ծընել մեր խորունկ հողին,

Հայոց լեռներում,

Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ շէկ անապատի

Օրդուները սև

Իբարու ետև


Յկան դարկեցին մեր քարւանն ազնիւ

Հայոց լեռներում,

Աընտ լեռներում:

Ու մեր քարւանը շրփոթ, սոսկահար,  
 Թալանւած, շարգւած  
 Ու հատւած, հատւած  
 Տանում է իրեն վերքերն անհամար,  
 Հայոց լեռներում,  
 Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարօտ՝  
 Հեռու աստղերին,  
 Երկնքի ծէրին,  
 Թէ էրբ կը բացւի պայծառ առաւօտ՝  
 Հայոց լեռներում,  
 Կանաչ լեռներում:



## Հ Ա Յ Ո Ց Վ Ի Շ Տ Ը

Հայոց վիշաք անհուն մի ծով,  
 Խաւար մի ծով ահագին,  
 Էն սև ծովում, տառապելով,  
 Լող է տալիս իմ հոգին:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում  
 Մինչև երկինք կապուտակ,  
 Ու մերթ յոգնած սուղում, իջնում  
 Դէպի խորքերն անյատակ:

Ոչ յատակն է դռնում անվերջ  
 Ու ոչ հասնում երկնքին...  
 Հայոց վրշաի մեծ ծովի մէջ  
 Տառապում է իմ հոգին:

1903



## ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

Երանի էր ձեզ, գոված երգիչներ,  
Դուք երգում էիք վաղ առաւօտեան,  
Երբոր երազներն ապրում էին դեռ,  
Ոսկի երազներն հայի փրկութեան:

Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,  
Խըրճիտ, վեհապանձ, թէպէտև դերի,  
Եւ ձեր քընարի ձայներն երջանիկ  
Կիբը հըրճանքով գալոց օրերի:

Ա՛խ, նա յօշոտեց մեր աչքի առջև  
Եւ մեր ըզգայուն սըրտերն իրեն հեռ,  
Ոսկի երազներ՝ միրաժի նըման՝  
Մեր անապատում չըքացան անհետ:

Եւ մենք խորտակած մեր կեանքի ծէզից,  
Անյոյս ու դալուկ, ճակատներըս ցած,  
Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,  
Ընկնում են սըրտից և՛ երգ, և՛ Ս.սուած:

1902



## ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Կըռունկն երկընքում ճամփա կը հանի,  
Կ՛ըռ, կը՛ռ, ձէն կուտայ էն խաւար ամպում.  
Ղարիբ մորթել՝ չ՛իտէ ինչ անի  
Մնգութ աշխարհքում, անծանօթ ճամփում:

Ա՛խ, էս սև ճամփէն, էս դըժար ճամփէն  
Արդեօք ո՛ւր կերթայ, արդեօք շնա մընաց,  
Որտեղ կընասնի էս օրը արդեօք,  
Որտեղ կը հանգչեն ոտներըս յոգնած:

Է՛յ, բարով գնաս, սիրելի թըռչուն.  
Գարուն կը բացւի, ետ կուզաս կըրկին,  
Չագով ընկերով կուզաս դէպի տուն՝  
Քո բունը հէրևան, չինարու գըլխին...

Ա՛խ, ես բընաւեր, ընկած սարէ սար,  
Ու քաշ եմ գալի, ու քաշ եմ գալի,  
Մնքուն ջրի պէս դիպչում քարէքար  
Մնչունչ քարին էլ երնէկ եմ տալի:

Ամեն քար, Ասուած, իր տեղն է անժափ,  
Հէնց ես եմ մենակ տեղից զըլորուել.

Ամեն հաւք, անգոթ, իր բունը ունի,  
Հէնց ես եմ դարիբ ճամփում մոլորուել...

Ա՛խ, էս սև ճամփէն, էս զըժար ճամփէն  
Արդեօք ո՛ւր կերթայ, արդեօք շատ մընաց.  
Ո՛րտեղ կը հատնի էս օրը արդեօք,  
Ո՛րտեղ կը հանգչեն ոտներըս յոգնած...

1896




### ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Ասուած, ինչպէս ծուխ օրերըս անցան,  
Ռսկերքըս, ինչպէս խրոիւ, չորացան,  
Սիրտըս ցամաքեց, ընկայ խոտի պէս,  
Ճամփէս մոռացայ անագին վըշտէս:

Հացըս նախատինքն եղաւ օտարի,  
Հանգիստըս ճամփում հալածանքների,  
Լըսեցի ցերեկն աղաղակ ու բօթ,  
Գիշերը լացի մինչև առաւօտ:

Տըքնեցի, ինչպէս բու աւերակում,  
Ինչպէս միայնակ ճընճղուկ՝ տանիքում...  
Ասուած, տանջանքից ուժերըս հատան,  
Միթէ չըհասաւ ժամը փըրկութեան:

1898.



## ՏՐՏՄՈՒՅԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Տէր, մինչև երբ մեր աչքերը Քեզ մընան.  
Մեր գոյժն հասաւ հեռո՛ւ-հեռու ազգերին,  
Աշխարհ լըցւեց մեր աղաղակ, մեր կազան,  
Ու չի անցել մեր տանջանքը տակաւին:

Ինչո՛ւ, Աստուած, որբերն արդեօք հայրական  
Գութըզ կօրհնեն կտարածի էս ձորում,  
Թէ տարագիր պանդուխտները կըստամեն  
Ողորմութիւնդ օտար-օտար ափերում:

Միթէ, Աստուած, դեռ բաւական չըտեսար  
էսքան աւեր, վիշա ու ցաւեր, հեծութիւն,  
Միթէ, Աստուած, հաճելի չեն քեզ համար  
Աղօթք ու սէր, կեանք ու տաղեր զըւարթուն:

1898



## Ո Ր Բ Ը \*)

Հայ ժողովրդ. ասանդութիւն

—Սընակ... Սընակ...» Գիշերն ի բուն  
Կանչում է Որբն աղեկըտուր,  
Աշխարհքն աճինչ մըտած խոր քուն,  
Ինքը մենակ ու շուրջը լուռ:

Աղջիկ էր նա մի ժամանակ,  
Էնպէս աշխնժ ու գեղանի.  
Թուրքը տեսաւ, խելքը գընաց,  
Ուզեց զօռով հարեմ տանի:

—Մի վախենար, սիրուն քուրիկ,  
Ես չեմ թողնի քեզ տանելու.  
Քեզ կըթոցնեմ, ինչպէս մըրրիկ,  
էս աշխարհքից հեռո՛ւ, հեռո՛ւ...»

\*) Գիշերաճաշի ցեղից մի փոքրիկ թոշուն է, որ զիշերները տխուր ձէն է տալիս. ժողովուրդը Որբ է անւանում:

Էսպէս ասաւ քաջ Սըհակը,  
Քըրոջն առաւ փախաւ, գընաց,  
Թողած իրենց հօր աշխարհքը,  
Թուրքի դաժան լուծը թողած:

—Տես, էն ձիւնոտ, բարձր սարեր,  
Որ ձըգւում են հեռում անա,  
էն սարերն էլ անցնենք թէ չէ՝  
Դէնը, քուրիկ, էլ թուրք չըկայ...»

Հէնց էս խօսքում՝ թուրքը հասաւ,  
Սև ձին քըշած՝ սարի տակից.  
—Իմն է աղջիկն, իմն է, ասաւ,  
Ո՞ւր էք փախչում դուք իմ ճանկից...»

—Մի վախենար, սիրուն քուրիկ,  
Կանգնած եմ ես չար թուրքի դէմ.  
Փախիր, գընա... Ինչպէս մըրըիկ՝  
Նս էլ կը գամ քեզ կըհամնեմ...»

Ու ետ դարձաւ քաջ պատանին,  
Ձէնքի շաչիւն, զարկ ու աղմուկ.  
Ձարկ են տալիս, զարկ են առնում  
Հայի անաս կըտրիճն ու թուրք...

Աղջիկն արագ վագ է տալի,  
Շունչը հատած փախչում, փախչում.  
Մին էլ նայեց՝ թուրքն է գալի,  
Փընչում է ձին, գէնքը շաչում...

—Սիւ, ի՞նչ կընի թուշուն դառնամ...»  
Կանչեց անից խեղճը յանկարծ,  
Ու, բաց էին գըռներն երկնից,  
Լըսեց նըրա ձէնը Ասուած:

Դարձաւ թըռչուն մի թևաւոր,  
Երկինքն ելաւ, թըռաւ, պըրծաւ.  
Մընաց, մընաց, միւշէ էսօր  
Քաջ ախպէրը ետ չըդարձաւ:

էն օրւանից թըռչուն քոյրը  
Ցերեկն անով կուշ է գալի,  
Հէնց հասնում է մութ գիշերը՝  
—Սըհակ... Սըհակ...» ձէն է տալի:

Ձէն է տալի գիշերն ի բուն,  
Կանչում արխուր, աղեկըտո՞ւր,  
Աշխարհքն այնինչ մըտած խոր քուն,  
Ինքը մենակ ու շուրջը լուռ:



### ԱՂԱԽՆՈՒ ՎԱՆՔԸ

*Ազգային սամոյաթին*

Լէնկթէմուրն եկաւ, հուրն ու սուրն եկաւ,  
 Անօրէնն եկաւ, եկաւ ու եկաւ.  
 Հաւաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,  
 Փաթաթեց, պատեց, ինչպէս վիշապ-օձ,  
 Կանգնեց Մեանայ ափին հովասուն,  
 Էստեղ, ուր՝ ուշքը ու միտքն Աստրծուն՝  
 Անհունն է խորհում, մեռնեմ իր զօրքին,  
 Օհաննայ վանքը ծովի եզերքին:  
 Էն վանքում, Հայոց ազգին պահապան,  
 Աղօթք էր անում ծերուկ հայր Օհան.  
 Աղօթք էր անում իր հոգու համար,  
 Իր ազգի համար, աշխարհքի համար:  
 Երբ տեսաւ խաղաղ վանքիցը իրեն  
 Անօրէն մարդու էս գործն անօրէն,

Խըտովեց արգալը ծերունու հողին,  
 Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,  
 Դաննացած, դըժգոն մարդուց ու կեանքից,  
 Աղօթքը կիսատ դուրս եկաւ վանքից,  
 Իջաւ Մեանայ երեսը կապոյտ,  
 Ու քրթըմընջալով, միամիտ, անվոյթ,  
 Էն վէտ-վէտ, ծրփուն ջրերի վըրայ  
 Յամաք ոտներով գընում էր ահա:

Տեսաւ հրրաշքը Լէնկթէմուրն ափից,  
 Տեսաւ, սասանեց տեղը սարսափից:  
 Կանչեց, աղաչեց իշխանը թաթար.  
 — Ետ արի, ասաւ, ետ արի, արդար,  
 Ետ արի, ասաւ, սվ դու Աստծու մարդ:  
 Ետ եկաւ մեր հայր Օհանը հանդարտ,  
 Իր ցուպը ձեռին, ջրերի վըրով,  
 Ու առաջն ելաւ թաթարը սիրով:  
 — Ի՞նչ ես ուզում դու, սվ սուրբ ալևոր,  
 Գանձ, իշխանութիւն, թէ կեանք փառաւոր...»  
 — Քո փառքն ու գանձը հարկաւոր չեն ինձ,  
 Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:  
 Ուզում եմ թողնես՝ գընան ուր կուզեն,  
 Ու ազատ իրենց կեանքի ձէնն ածեն  
 Էս լէն աշխարհքում, արևի տակին...»  
 Ասաւ սուրբ մարդը մեծ աւագակին:

— Ժողովուրդ կուզե՞ս... լաւ, լինի էդպէս:  
 Էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,  
 Գընա ինձ համար աղօթք արա, ծեր:»  
 Ասաւ Լէնկթէմուրն ու արեաւ սլաուէր,  
 Որ գերի Հայոց ազգը մի թնկց  
 Էն վանքը մըտնի սուրբի ետևից.  
 Ինչքան ժողովուրդ մըտնի էն վանքը,  
 Նրան է բաշխում էնքանի կեանքը:  
 Հրաման արաւ իրեն գօրքերին  
 Ու բաց թողեցին հայ ազգի գերին:  
 Մըտնում է գերին, մըտնում մի ծէրից,  
 Անցել է թիւը հարիւր հազարից,  
 Չի լըցում սակայն հասարակ մի վանք...  
 Ապշում է թաթարն—արմանք ու զարմանք:  
 —Թողէք, կանչում է իրեն գօրքերին,  
 Յորձանք է տալի նորից հայ գերին:  
 Գալիս է գերին, գալիս է նորից,  
 Անցել է թիւը հազար հազարից,  
 Չի լըցում սակայն էն վանքը կրկին,  
 Չի կանգնում հայի հոսանքն ահազին:  
 Երբորդ անգամն է կանչում գօրքերին:  
 Գալիս է անցնում մընացած գերին:  
 Անցնում է գերին, անցնում շարէշար,  
 Էլ մարդ չըմնաց, գընաց ինչ որ կար,

Դատարկ է սակայն վանքը տակաւին...  
 Թէմուր զարհուրած դառնում է չորս դին.  
 — Չարթուն եմ արդեօք, թէ երազ տեսայ...  
 Յայանեցէք ինձ շնա, ի՞նչ հըրաչք է սա...»  
 Գընում են տեսնում մարդիկն իր զըրկած—  
 Մեր հայր Օհանը՝ աղօթքի չոքած,  
 Աչքերն երկընքին, միրուքն արցունքոտ,  
 Ով որ հայ ազգից մըտել է իր մօտ,  
 Իր սուրբ աղօթքով, կամքով Վերինի,  
 Փոխել է իսկոյն, դարձրել աղանի,  
 Բաց սլաուհանից թողել ամենքին,  
 Թըուցրել դէս իրենց լեռները կըրկին,  
 Ու հիմի վանքում էլ չըկայ ոչոք,  
 Ինքն է աղօթում մենակ, ծընկաչոք:

1912



Հ Ո Գ Ե Հ Ա Ն Գ Ի Ս Ս

Ու վեր կացայ ես, որ մեր հայրենի օրէնքովը հին՝  
Վերջին հանգիստը կարգամ իմ ազգի անբախտ գոհերին,  
Որ շէն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով  
Մարած են, մեռած, փրուած ու ցրւած հազար հազարով...

Ու կրրակ առայ Հայոց հրդեհի կարմիր բոցերից,  
էն խաղաղ ու պաղ երկրնքի ծոցում վառեցի նորից  
Մասիան ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրութ, Թանգուրէք,  
Հայոց աշխարհքի մեծ կերտները վառեցի մէկ մէկ,  
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպէս հեռաւոր արև,  
Անհաս, աննրւազ, միշտ վառ ու պայծառ, իմ գլխի վերև...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նրման,  
Կանչեցի թըշառ էն հողիներին՝ ցըրւած յաւիտեան  
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծոփն Հայոց,  
Մինչև Հելլեսպոնա, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...  
—Հանգէք, իմ որբեր... իզնւր են յուզմունք, իզնւր և անշահ...  
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպէս կը մնայ...»

Աշիցըս եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ անեղ ձէներով  
Սաղմոս կարգալով՝ անցան, զընացին խոր խոր ձորերով,  
Ամպերն էլ ելան Ձիրաւի ձորից, հըսկայ բուրվառից,  
Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,  
Բոյլ-բոյլ, բուրաւէտ, շարժւեցին դէպի կողմերը հեռու,  
Գոհար ցօղելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խնկելու  
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծոփն Հայոց,  
Մինչև Հելլեսպոնա, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...  
—Հանգէք, իմ որբեր... ձեր նոր գնացած էդ ճամփէն վրկայ՝  
Աշխարհքը ոչում ոչ մընացել է, ոչ էլ կըմընայ...»

1916



## Վ Ե Ր Զ Ի Ն Օ Ր Ը

Եփրատի ափին դէմուդէմ եկած՝  
 Զարկուում էին խիստ, զարկուում ու զարկուում  
 Աննահանջ ու քաջ խրմբերը հայի  
 Եւ քուրդն ու թուրքը կիտուած արենխում:  
 Երբ որ յոգնեցին երկար զարկելուց,  
 Երբ որ յոգնեցին բազուկներ կուռ,  
 — «Հէյ, ընկեր, ասաւ խրմբապետն արի,  
 Հէյ, ընկեր, ասաւ, բարձրացիր շուտով,  
 Բարձրացիր Հայոց բարձրը լեռների  
 Ամենից բարձրը գագաթն ու նայիր,  
 Ո՛րտեղ է, մի տես, վերջը թըշնամու...»  
 Բարձրացաւ ջըլուտ հայդուկը հայի,  
 Բարձրացաւ բարձրը գագաթը լեռան  
 Ու յոգնած ձեռքը դրրեց ճակատին.  
 — «Խրմբապետ, ասաւ, ընկեր խրմբապետ,  
 Տեսնում եմ հեռու հորիզոնները մութ  
 Եփրատի դալար հովիտներն ի վար՝  
 Մինչև Տաւրոսի լեռները կապուտ,  
 Մինչև մըշուշոտ պարը Պոնտոսի,

Մինչև բարձրաբերձ Ժայռերը Մոկաց...  
 Ծուխ է բարձրանում Մուշի հովիտից,  
 Ծուխ է բարձրանում Մասմայ սարերից,  
 Ծուխ է բարձրանում Վանայ կողմերից,  
 Ծուխ է բարձրանում Աբաղայ դաշտից,  
 Կըրակ է կանգնած Զէյթունի վըրայ...  
 Ամեն կողմերից թըշնամին գունդ-գունդ  
 Շարժւում է մեր դէմ, ու չի երևում,  
 Չեմ տեսնում վերջը նրբա շարքերի...»  
 — «Հէյ, ընկեր, ասաւ խրմբապետն այնժամ,  
 Հէյ, ընկեր, ասաւ, ետ նայիր հապա,  
 Ետ նայիր, մի տես, հայերը հեռւից  
 Չե՞ն գալիս արդեօք մեզի օգնութեան...»  
 Ու յոգնած ձեռքը դրրեց ճակատին,  
 Կըտրիճ հայդուկը նայեց դէպի ետ.  
 — «Խրմբապետ, ասաւ, ընկեր խրմբապետ,  
 Տեսնում եմ անա, ինչպէս ափիս մէջ,  
 Սև ծովից մինչև ծովը Վըրկանայ,  
 Մինչև Կովկասի պատնէշը ձիւնոտ.  
 Գալիս են խումբ-խումբ հայերը ճեպով,  
 Գալիս են ճեպով մեզի օգնութեան:  
 Իջնում են Միւնեայ մութ-մութ սարերից,  
 Ենում Գուգարքի խոր-խոր ձորերից,  
 Շիրակի դաշտից մինչև Այրարատ,  
 Ու ողջ ափերը Անուշ Արաքսի

Անվերջ տաղնապով իրար են անցնում...

Գալիս են ամեն կողմից Կովկասի,  
Գալիս են հեռու, հեռու կողմերից,  
Գալիս են կարօտ պանդուխտներն ամեն,  
Գալիս են ցրբւած տղերքը նորից,  
Գալիս են՝ պարզած զբրօշն հայրենի...»

— «Հէյ ընկեր, ասաւ խրմբապետը փորձ,  
Հէյ, ընկեր, ասաւ, սուր աչք ունիս դու,  
Նայիր դէպ հիւսիս, աւելի հեռու,  
Զի՛ շարժում արդեօք հիւսիսը հըգօր...»  
Ու նայեց հայդուկն աւելի հեռու,  
Նայեց սըրատես աչքով արծւենի:

— «Խրմբապետ, ասաւ, ընկեր խրմբապետ,  
Աչքըս չի կրտարում՝ որտեղից մինչ ուր՝  
Շարժում է, ահա, հիւսիսն ընդհանուր.  
Յորձանք է տալիս ծովն ըռուսական,  
Յորձանք է տալիս ծանր ու ահաւոր,  
Դէպի ամեն կողմ—ափերն հեռաւոր.  
Եւ, հուր ու շոգի շընչելով ուժգին,  
Գընացքը կրտարած զընացքի ետև,  
Ու, գալարելով հովիտից հովիտ,  
Գալիս են, ինչպէս վիշապներ սև-սև...»

— «Հէյ, ընկեր, կանչեց խրմբապետն արի,  
Հէյ, ընկեր, կանչեց, զէ՛ ցած եկ արագ,  
Առ հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,

Իջիր Սըրբազան ափը Եփրատի.  
Հին պատերազմի վերջին զարկն է սա,  
Հին ոճրագործի հոգեվարքն է սա...»

— «Խրմբապետ, կանչեց ընկեր խրմբապետ,  
Խրմբապետ, կանչեց հայդուկը ջահել,  
Հայոց երկնահաս լեռների վըրայ  
Խնր, խորհրդաւոր ձայներ են լսում.  
Դըրըգում է խուլ երկինքը վերից  
Էն անհուն, անքուն, անթիւ ձայներից...»

— «Հէյ, ընկեր, կանչեց խրմբապետը հին,  
Հէյ, ընկեր, կանչեց, խաչ հան երեսիգ.  
Էդ կեանքում տանջւած, տանջանքով մեռած  
Անթիւ, անհամար, անբախտ հայերի  
Հողիններն են հէգ, որ լաց ու կոծով,  
Արեան մըրրիկով երկինք վերացան:  
Փոթորկում են դեռ Աստու առաջին,  
Բողբում անհուն երկընքովը մին.  
Նըրանց բողբի աղմուկն է անլուռ,  
Հասնում է ներքև՝ հայի ականջին...  
Հէյ, ընկեր, ասաւ, խաչ հան երեսիգ,  
Առ հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,  
Իջիր Սըրբազան ափը Եփրատի,—  
Մեծ տառապանքի վերջին օրն է սա...»

## ԼՈՒՍԱԻՈՐՁԻ ԿԱՆԹԵՂԸ

Կէս գիշերին կանթեղը վառ  
Կախ է ընկած երկընքից,  
Լուսաւորչի կանթեղն անմար  
Հայոց մըթնած երկընքից:

Կախ է ընկած առանց պարան  
Արագածի կատարին,  
Ու սեղանից հըսկայական  
Լոյս է տալիս աշխարհին:

Լոյս է տալիս երկա՛ր դարեր,  
Ու վառուում են միշտ անշէջ  
Սուրբի մաքուր արցունքները  
Քեղի տեղակ նորա մէջ:

Ոչ մարդկային ձեռ կըհասնի  
էն ահաւոր բարձունքին,  
Եւ ոչ քամին կըհանգցընի,  
Վիշապ քամին ահագին:

Երբ պատում է սև խաւարը  
Չընաշխարհիկ մեր երկրին,  
Երբ տիրում է ահն ու վախը  
Թոյլ, կասկածոտ սըրտերին,

Ով անմեղ է, լիքը սիրով  
Ու հաւատով անսասան,  
Ով նայում է վառ յոյսերով  
Դէպի Հայոց ապագան,

Նա կըտեսնի էն մշտավառ  
Ջահը կախւած երկընքից,  
Ասես Աստծոյ աչքը պայծառ  
Նայում է ցած՝ երկընքից:



Յ Ա Ն Կ

	Երես
1) Հայրենիքիս հետ . . . . .	5
2) Մեր ուխտը . . . . .	7
3) Հին կռիւը. Տանը . . . . .	8
4) » » Երկրում . . . . .	23
5) Հայոց լեռներում . . . . .	33
6) Հայոց վիշտը . . . . .	35
7) Մեր նախորդներին . . . . .	36
8) Գաղթականի երգը . . . . .	37
9) Տրամութեան սաղմոսներից . . . . .	39
10) » » . . . . .	40
11) Որբը . . . . .	41
12) Աղանու վանքը . . . . .	44
13) Հոգեհանգիստ . . . . .	48
14) Վերջին օրը . . . . .	50
15) Լուսաւորչի կանթեղը . . . . .	54



ՀՀ Ազգային գրադարան



NL0342215



32367